ՆՈՐ ԴԱՐ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԳԻՆ 20 ՓԱՐԱ ՊՂԻՆՁ   ԳԻՆ 30 ՓԱՐԱ ԹՈՒՂԹ

Ը. ՏԱՐԻ 14 ՐԷՊԻՒԼ ԱԽԸՐ   ՇԱԲԱԹ 16 ԱՊՐԻԼ 1877   Ն. Տ. ԱՊՐԻԼ 28   ԹԻՒ 2021

ՆԵՐՔԻՆ

Կառավարութիւնը պարտաւորեալ Բուլէն հրատարակուած պատերազմին առջև՝ պատերազմ հրատարակուելէն երկու օր վերջը պարտաւորեցաւ Օսմ. խորհրդարանին պիւճէ մը ներկայացնել՝ գանձուն բացը և պատերազմին ծախքը կարենալ գոցելու համար։

Այս պիւճէին համեմատ բոլոր բացը 50 միլիօն լիրայ է, ասոր 35 լիրան անվճար տոկոս են. դիզուած պարտքերն են, մնացած 15 միլիօն լիրան պատերազմի ծախքը դիմաւորելու համար անմիջական պէտք մէ, որոնք կառաջարկէ կառավարութիւնը գոյացնել ներքին փոխառութեան դիմելով. Երեսփոխանք ալ այժմ կը մտածեն թէ՝ արդեօք այդ առաջարկեալ ներքին փոխառութիւնը հարկադրի՞չ ընեն թէ՝ կամաւոր։

Մինչև ցարդ կառավարութիւնը ինքն իր գլխուն բան մը չըրաւ. եթէ քօնֆէրանսին առաջարկութիւնը մերժեց՝ Բ. Դըռան բոլոր բարձրաստիճան ամսականաւորաց խորհրդովը մերժեց. եթէ Բրօթօքօլը մերժեց՝ Օսմ. երկու խորհրդարանաց խորհրդովը մերժեց. ուստի և թէ ասոնցմէ պատերազմ հետևեցաւ, այդ հետևանքը կառավարութեան բռնած ընթացքէն չէր, այլ դէպքերուն բնութենէն և Թիւրքիա զանազան ձևերու տակ ներկայացնող մարմնոց տուած խորհրդէն։

Արդ իրաց այս վիճակին մէջ՝ երբ հիմայ գործը զէնքի կուգայ՝ այդ մերժման խորհուրդները տուող մեծ մեծ մարմինները միթէ կառավարութիւնը միա՞կ պիտի թողուն. կամ լաւ ևս միթէ անոնք տուրքերու տակ հեծեալ ժողովրդեա՞ն վերայ պիտի դնել ուզեն այս ներքին փոխառութեան հարկադրութիւնը, թէ իրենք՝ որ կարողագոյն և հարստագոյն մասը կը կազմեն երկրին՝ իրենք պիտի ստանձնեն այս փոխառութիւնը ստորագրել։

Այսանկ արտաքոյ կարգի պարագաներու մէջ՝ սոսկ հայրենասիրական զգացմանց դիմել հնար, ուր հիմնաւոր զգացում չը կայ, զոհին դիմելու նշանակութիւնն ունի. ուստի եթէ կառավարութիւնը անպատճառ ձեռք անցնել կուզէ այդ անմիջական պէտք եղած գումարը՝ նախ և առաջ Կ. Պոլսոյ մէջ ո՞վ որչափ կալուած ունի և որքան վարձք կընդունի՝ անոնց մէկ ցանկը որոշ ձեռքն ունենալու է, այս ցանկը անգամ մը ձեռք անցընելէն վերջը հարկ անհրաժեշտ է որ անոնց վրայ հարիւրի վերայ փոխառութիւն մը կամ տուրք մը դնէ. երբ այս ըլլայ՝ այն ատեն պիտի տեսնենք մեր կալուածատէր երեսփոխանաց մէջ ո՞վ է այն, որ երեսփոխանական ժողովին մէջ կառավարութեան հաճոյ երևնալու համար յանուն ազգին և երկրին կորոտայ առանց անձրևելու և ո՞վ է այն որ 'ընաւ չորոտալով կանձրևէ։

ԴՐԱՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թղթադրամը 176ի ելաւ, դրամոց գինը անկարգութեան մէջ կը շարունակէ այս ճգնաժամութենէս ժողովուրդը իրաւամբ տագնապեալ է հարցնելու թէ գանձուց պաշտօնեայն ի՞նչ միջոցներ ձեռք առաւ մինչև ցարդ, այս անկարգութեան առաջքը առնելու համար։ Եուսուֆ բաշա մեծ համարմամբ և խոստմամբ պաշտօնի հասաւ, այն ատեն մենք ջանացինք ցուցնելու խարդախ դրամագիտաց նպատակը, որք կը ջանան համոզել թէ երկու անգամ երկուքն եօթը կրնայ ըլլալ. ջանացինք ցուցնել որ թղթադրամին բռնի արժէքի ընթացքը դէշ միջոց մ'է. և թէ թղթադրամէն աւելի օգուտ մը առնելու համար, նորա հրապարակութեան մանրամասնութեանց մեծ խնամք և ուշ դնելու է. ի սկզբանէ ի վեր չը դադրեցանք յայտարարելու որ տէրութիւնը պէտք եղած միջոցները ձեռք չառաւ թղթադրամի փոփոխութիւնը դիւրացընելու. և այս բանէս օգուտ քաղել, որ տէրութեան ներկայ տագնապալից վիճակին մէկ հատիկ աղբիւր մ'է իրեն համար՝ անպատ ծախուցը հանելու. բայց ցաւօք սրտի կը տեսնենք որ Եուսուֆ բաշա տակաւին բանի մը չը ձեռնարկեց՝ գանձուց վերականգման մէկ հատիկ միջոց եղող թղթադրամի ընթացքը և անոր փոփոխութիւնքը բարւոքելու համար. այլ միայն խորհրդածեց, սակայն ժամ է արդ որ մտածածները ի գործ դնէ, ապա թէ ոչ ամենայն ինչ վեր ի վայր պիտի ըլլայ, Էտհէմ և Սաֆվէթ բաշաներու քաղաքագիտութեան մէջ տարած յաղթանակնին ապարդիւն պիտի մնայ, և քաջ ու համբերատար բանակը պիտի յուսահատի։ Ժամ է արդ որ գանձուց պաշտօնեայն իտալական դրամային դրութիւնը քննէ և սորվի, թէ ինչպէս Իտալիա 60 միլիօն սթէրլինի թղթադրամը 8 առ հարիւր գնոյ ցածութեամբ կանգուն պահեց, մինչդեռ Թիւրքիա 6 միլիօն ըսթէրլինի թղթադրամը տասը առ հարիւր գնոյ ցածութեամբ հազիւ կրնայ կանգուն բռնել։

Թող Եուսուֆ բաշա Պ. Տէբրէթիսի դրամական ծրագիրը ընթեռնու, վասն զի քիչ շատ Բ. Դուռն ալ հիմայ նոյնպիսի վիճակի մը մէջ է, ինչ որ էր Իտալիա. սակայն Իտալիա այսօր ամեն բանով առաջին կարգի տէրութեանց կարգը հասաւ, և այս ալ իրեն առաջին կարգի պաշտօնէից խելքովը եղած է։ Բայց Տաճկաստանը շատ ետ մնացած է, վասն զի Տաճկաստանի պաշտօնեաները ինչպէս որ պէտք է չեն աշխատիր. Եուսուֆ բաշա պէտք էր որ նախատեսէր ներկայ պատերազմս, որով և դրամոց այս աստիճան իյնալիքը. այն ատեն կստիպուէր ազդու միջոցներու ձեռք զարնել, և կրնար նախագուշակել որ տէրութիւնը դրամի մեծ պէտք պիտի զգայ, բայց որչափ ալ կուզենք, ամենևին գործ մը կամ ի կիր արկեալ միջոց մը չենք կրնար տեսնել Եուսուֆ բաշայի պաշտօնէութեանը ժամանակ. և այս բանս զինքը մեծ պատասխանատուութեան կենթարկէ, բայց յուսանք որ ժամանակիս ծանրութենէն կը համոզուի անմիջապէս ազդու միջոցներու ձեռնարկել։

Երէք գլխաւոր ազգու միջոց կայ թղթադրամոց ջնջմանը բաւականելու համար, գործ պէտք է անմիջապէս գործադրել, և ոչ թէ վաղը կամ գալ շաբաթ կամ ամիսէ մը կամ պատերազմէն վերջը. որ ժամէ ի ժամ կրնայ անոնց գործադրութիւնը անհնարին ըլլալ. և անոնք են նախ՝ թղթադրամը վերստին այնպիսի թղթերու վրայ կոխել տալ զորս նմանցնել անհնարին ըլլայ ։

Երկրորդ՝ վճռական և ազդու կերպով խստակարգ հրամայել որ մէճիտիէի տեղ թըղթադրամ ընդունին, չէ թէ միայն ապառաց ալօց տեղ այլ և ապառնիկ միացածներուն, և այլ ամեն տուրքի տեղ ։

Երրորդ՝ ժողովել որչափ որ հինգնոց և վեցնոցներ կան և բոլոր պղինձ սառկները, որոնցմով թղթադրամ կը խարդաւի, և անոնց տեղ միակերպ թըղթադրամ մը հրատարակել, որ դահեկանը և անոր կոտորակները ներկայացնէ ։

Զասոնք գործադրելու համար ամենևին դժուարութիւն մը չը կայ. առաջինը պարզ է և դիւրաւ կրնայ գործադրուիլ Պանք Օթօմանի ձեռնտուութեամբը, ժողովելով ներկայ պատառատուած թղթերը որ կայսրութեան կնիքը անգամ կրելու արժան չեն. Երկրորդ միջոցը հրովարտակով մը կրնայ գործադրուիլ, զոր պէտք է ուղղել դէֆթէրտարներուն և միևնոյն ժամանակ ծանուցանել հասարակութեան որպէսզի այս էֆէնտիները ըստ իրենց քմացը չը կարենան մերժել եղած հրամանը. վասն զի ինչպէս կը տեսնուի երեսփոխանական ժողովին մէջ, անոնք մեծաւ մասամբ հմուտ մարդիկ չեն ։

Երրորդ առաջարկութեան գործադրութիւնն ալ ամենևին անպատեհութեանց տեղի չը տար. պայմանագրով պէտք է կարգադրել, և գանձուց պաշտօնէին գլխաւոր ուշադրութիւնը պայմանագրին ձևին և ստորագրութեան կարգաւորութեանը և նոր հրատարակուելիք դրամոց տեսակին վրայ ըլլալու է ։

Եթէ Եուսուֆ բաշա զասոնք անմիջապէս գործադրէ, մասամբ մը իր ծանր պատասխանատուութենէն պիտի ազատի որ աւելի առաջ ցուցած անգործունէութեամբը վաստըկեցաւ ։

Ղևանդ Հէքայա

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Պաթումի հրամանատար Հասան բաշա ապրիլ 14ին (Հինգշաբթի) հետևեալ հեռագիրը ղրկած է Սերասքեր բաշային։

«Այսօր ինչպէս որ հեռագրաւ իմացուցի՝ Ռուսիացւոց հետ այս առաւօտեան ժամ 11էն մինչև երեկոյեան ժամ 11 փառաւոր պատերազմ մը ըրինք. Ռուսք շարունակ շատ մը թընդանօթ և հրացան արձակեցին. սակայն Օսմ. զօրքերն լաւ դիրքի մէջ ըլլալէն՝ 2 մեռեալ և 3 վիրաւորէ ուրիշ վնաս չունեցանք. թշնամին շատ ջարդ կերաւ. Օսմ. զինուորք դիրքերնին չը կորսնցուցին. թշնամին ալ չը կրցաւ յառաջ քալել. ասոնք երեքտասնեց հազարի քով այսօրէն խմբուած ըլլալը կը ծանուցանեմ»։

Ահմէտ Մուխթար բաշայի Էրզրումի բանակի սպայակոյտին գրած յայտարարութիւնը.

Զինակիցք իմ,

Անկեղծաբար շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեր ըրած քաջակցութեանը և գնդերուն կարգապահութեանը վրայօք. վասն զի իմ լսածէս և յուսացածէս վեր դառաւ. ձեր սրբազան պաշտօնը՝ հայրենիքը և նորա որդիքը պաշտպանելն ըլլալով, պէտք է որ ձեր նպատակը և ձեր գործերն ալ ձեր պաշտօնին բարձրութեանը համապատասխանէ. քաջ գիտէք դուք որ զինուորի մը ամենամեծ պարտականութիւնը կանոնաց ճշդապահ ըլլալն է. սպայի մը բանակի հրամանատարին ունեցած հնազանդութիւնը պարզ զինուորի մը հնազանդութեանը պէս պիտի ըլլայ, Ս. Գիրքը անգամ Աստուծոյ և Մարգարէին վերջը երկրորդ կարգ իր մեծերուն հնազանդիլը ամենամեծ պարտք կ'համարէ և կանոնապահութեան մէջ մեծ արդիւնքը անձնուրացութիւնն է, որով մէկը առանց իրեն տրուած հրամանին պատճառը քննելու և կամ բարի և չար ըլլալը մըտածելու, ճշդիւ կը գործադրէ վասն զի բարձրագոյնի մը հրամանը միշտ հասարակաց օգտին համար կը տրուի. ամենքս ալ այս ընդհանուր և բացարձակ կանոնին պէտք է հետևինք, որ մի միայն բանակաց զօրութիւնը կը հանդիսացնէ. [illegible] թէ բարձրեալն մեր ջանքերը պսակէ ։

Ինչ որ կ'երևայ, առջի օրուան Կիւրիայի, Իւրկէզի և Պաթումի մէջ եղած կռուոյն մէջ, Ալի բաշա 3000 անկանոն հետևակազօրովը և 500 հեծեալովը յաջողեր է Ռուսական բանակին յառաջապահ գնդերը վանել ։ Ալի բաշա այն հին տէրէպէյիներէն մէկն է որ Չիւրիւք սույի կողմերը շատ ստացուածքներ և հոն տեղի բնակչաց վրայ մեծ ազդեցութիւն ունի, բաշայի պաշտօնանունը անուանական է միայն, և կայսերական բանակին հրամանատար չէ, այլ իր գնդերը Պաշը-պօզուքներէն կազմուած է, և կ'երևի թէ միջին դարու ասպետ մ'է ։ Տակաւին հեռագիր մը չկայ որ Նէրապիոյ մէջ կռուոյ մը տեղի ունեցած ըլլալը հաստատէ, այլ Ռուսք Թուլչայի ուղղութեամբ դէպի Տօպրուճա կը յառաջեն. Ահմէտ բաշայի տորմիղը երեք զրահաւորով Շէվքէթիէն կը ռմբակոծէ ։ Լ. Հ.

Պաշտօնապէս կը ծանուցուի որ Միրալայ Օսման պէյ զօրքը երկուքի բաժնած Մէրտիտներուն երկիրը մտեր է, ամբողջ գրաւեր է առանց պատերազմի և Պիպ Տօտա իշխանին հետ համաձայնելով սոյն կողմէն ալ ապստամբութիւնը դադրեր է ։

Պարսից դեսպանը պաշտօնապէս կը ծանուցանէ որ Պարսից տէրութեան և Բ. Դրան մէջ ամենևին տարաձայնութիւն չկայ և թէ սահմանային յարաբերութիւնք կը շարունակուին ։

Պաթումի հրամանատարը 15 ամսաթուով կը հեռագրէ թէ ապրիլ 14ի գիշերը Ռուսք ժամը 8ին Ալի բաշային գնդերուն վրայ յարձակեր են Պարի տիրելու նպատակաւ, բայց շատ մը մեռեալ թողլով ետ դարձեր են ։ Կիւրճիստանի երևելիներէն Պէտամ պէյ վիրաւորուեր է ։

Ռուսաց յառաջապահները Կալըց և Վէրկուլ հասեր են ։

Նէօլօղօս կ'ըսէ թէ Նաւատորմին ռմբակոծած Շէվքէթիէն բերդը առնուեր է ։

Քուրիէ կ'ըսէ թէ Օսմանցիք Քալաֆաթի և Վէրկուղի տիրեցին, Սէրէթի կամուրջը դեռ կործանուած չէ. Ռուսք օրը տասը հազար հոգի հազիւ կանցընեն շոգեկառքով, ուստի մինչև երկուշաբթի Օսմանցւոց չը պիտի պատահին ։

Ռուսճուքէն կը հեռագրեն թէ պատերազմի ժամանակ վալիին պաշտօնատունը Ռուսճուքէն Շումնա պիտի փոխադրուի ։

Երէկ հասած հեռագիր մը կ'ըսէ թէ Սիւլէյման բաշա 30000 հոգիով Գարատաղի սահմանագլուխը մտեր է ։

Երէկ վեհ. կայսրը Մեծ Եպարքոսին հետ միջօրէի աղօթքը Այա Սօֆիայի մզկիթը կատարելէ վերջը, Թօփ գաբուի ապարանքը գնացեր է և հոն Խըրքայի Շէրիֆին տեղի բոլոր կարդացողները ժողովելով աղօթեր են վեհ. կայսեր կենացը համար. Մեծ Եպարքոսը կառքին մէջ վեհ. կայսեր դիմացը նստեր էր, որ մինչև ցարդ Պոլսոյ մէջ տեսնուած չէ ։

Բ. Դուռն յայտարարութիւն մը հրատարակեց երէկ, որուն մէջ պատերազմին պատճառները և պատասխանատուութիւնը Ռուսիոյ վրայ կը թողու ։

Վառնայի բօղթան պատերազմի պատճառաւ դադրեցաւ ։

Երէկ երեք հատ շոգենաւ զէնք և մթերք տարին ի Վառնա և ի Պաթում ։

Գ. Քրիսթիչ Սերվիոյ գործակատար անուանուեցաւ իշխանին կողմէն ։

Երէկ իրիկուն Շէյխ իսլամի Դուռն Մեծ Եպարքոսի նախագահութեամբ արտաքոյ կարգի ժողով մը կազմուեր է ։

Իտարէի Խայրիէի շոգենաւները Ծովային գործոց պաշտօնարանէն վարձուած են, ասոնք պատերազմի ժամանակ զէնք և մթերք և զօրք միայն պիտի կըրեն ։ և Ազիզիէի շոգենաւները ասոնց պաշտօնը պիտի կատարեն ։

Ռումանիոյ իշխանը Զարէն հետևեալ յայտարարութիւնը ընդունած է ։

«Բ. Դրան յամառութենէն Զարին ըրած բոլոր խաղաղասիրական բանակցութիւնները ապարդիւն ելլալով, և քրիստոնէից վիճակին ալ չը բարւոքուելով, իրենց կեանքը և ինչքը միշտ սպառնալեաց ենթարկուելով, Զարը յանուն մարդկութեան իրաւունք ունի արևելեան Սլաւաց պաշտպանութեանը, և ստիպուած է զօրաւոր միջոցներու ձեռնարկել, հաստատուն երաշխաւորութիւն մը ձեռք ձգելու համար դըժբաղդ կրօնակցացը օգնելու նպատակաւ :

Մտէնասարա կը յաւելու թէ Զարը յայտարարութեանը մէջ յիշեր է նաեւ Պուլկարիան գրաւել՝ իբրեւ իրական երաշխաւորութիւն. եւ թէ Ռուսիա տէրութիւններն ալ պիտի հրաւիրէ մասնակցելու այս մարդասէր ձեռնարկութեան. եւ թէ ամենեւին նպատակ չունի աշխարհակալութեան :

ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

Ընդհանրապէս կը ծանուցուի թէ Սերէթի անցքը բռնելու համար եւ Տաճկական նաւատորմին պաշտպանելու համար, Ռուսիոյ բանակին մեծ մասը 20 կամուրջով օրէ օր Քօնկէնիէն Մարաշէշթի պիտի երթան, Սերէթի ապահով հովիտէն Ֆօկշանի, Ռենիէ եւ Պուղէօ պիտի անցնին. անկէ Տօպրուճայէն անցնելով մինչեւ Բազարճըք պիտի յառաջանան :

Հոս կամ բաց ճակատամարտ մը պիտի տրուի եւ կամ Ռուսք ամուր քաղաքաց վրայ պիտի քալեն եւ այս կերպով պատերազմին ասպարէզը Աւստրիայէն հեռի պիտի ըլլայ. սակայն պատերազմադէտք Ռուսճուքի եւ Սիլիստրէի առջեւ Դանուբը անցնիլ անհնարին կը համարին. Տաճիկք երեք զօրաբաժին հեծեալ ունին միայն որոնցմէ մէկը Թուլչա, միւսն Վիտին եւ երրորդն Շումլա կը գտնուի, ասկէ կը գուշակուի որ բաց ճակատամարտ չպիտի տան, այլ իրենց ամրութիւնքը պիտի պաշտպանեն : Գլխաւորապէս Տաճկաց ակար կողմ Տօպրուճայի վրայ է ուր 6000 մարդ միայն ունին. Թուլչա եւ Մաչին խիստ ամուր են եւ ամրութիւնքը մեծ արգելք պիտի ըլլան Ռուսաց. Տաճիկք Գալաֆաթ չպիտի մտնեն վախնալով որ եթէ յաղթուին գետը կը թափին թշնամւոյն բռնութենէն :

Ուրիշ յատակագծի մը համեմատ Ռուսի բանակին մեծագոյն մասը Բալաջէն Իզմայիլ պիտի մտնեն Պարապոլի կամուրջը բռնելով, ի Դանուբը Հէրսովայէն կամ Չէրնօվատայէն պիտի անցնին, եւ Տօպրուճայէն Տաճկաց հողը պիտի մտնեն, այս անկէ ճամբաները յարմար են. եւ բրած շարժումնին զայս կը հաստատէ :

Ապրիլ 11 ամսաթուով Նոր Լրագրոյն մէջ հետեւեալը տեսնուեցաւ :

«Ռուսիոյ տէրութիւնը շրջաբերականով մը պիտի ծանուցանէ տէրութեանց թէ ինչ պատճառաւ զէնքի կը դիմէ. եւ Ռուսիա իւր քաղաքականութիւնը արդարացնելու համար կը բաւէ որ հետեւեալ յայտարարութիւնը ընէ :

Բ. Դուռն չընդունելով քրիստոնէից վիճակին բարւոքմանը համար երաշխաւորութիւն տալ, որ անհրաժեշտ էր ինչպէս տէրութիւնք ալ հաստատեցին, Ռուսիա կստիպուի զայն ձեռք ձգելու համար ի զէն դիմել : Տէրութեանց յոյսը անգամ մ'ալ ի դերեւ ելլելով Բ. Դրան բրօթօքօլը մերժելովը, եւ քրիստոնէից վիճակին ալ տակաւին չը բարւոքուելով եւ ապստամբութեանց առաջքն ալ չառնուելով, Ռուսիա կը կարծէ թէ ոչ իրեն շահուցը եւ ոչ Եւրոպայի շահուց նպաստաւոր կրնայ ըլլալ արեւելեան այս դառն վիճակը : Ուստի ի պաշտպանութիւն հասարակաց շահուց, յանուն մարդկութեան, եւ լոկ արեւելեան քրիստոնէից վիճակին բարւոքմանը նպատակաւ Ռուսիա ի զէն կը դիմէ :

Այս յայտարարութենէս անմիջապէս վերջը Ռուսք Տաճկաստան պիտի մտնեն. Ռուսիա սուրը մերկացուց մի միայն արեւելեան արդի դժբաղդ վիճակին պատճառաւ, զոր Եւրոպա ալ հաստատեց. Թէեւ կը ցաւինք այս խիստ վիճակին ի գործ դրուելուն վրայ, սակայն հաւատալով որ Ռուսիա պիտի յաջողի յարատեւ կերպով արեւելքի խաղաղութիւնը ապահովելու եւ նոր բարեկարգ դրութիւն մը վերածելու արեւելեան գործոց ընթացքը. ահա այս յոյսը միայն կ'սփոփէ զմեզ եւ այս յուսով անցաւ զգոսութիւններ յանձն կառնունք մեր կողմանէ :

Կը յուսանք որ քրիստոնէից վիճակը այնպիսի երաշխաւորութեամբ մը պիտի ապահովուի, որ ոչ թէ միայն Պուլկարաց եւ Սլաւաց նպաստաւոր ըլլայ. վասն զի ոչ թէ միայն անոնք այլ եւ Յոյնք եւ Հայք, մանաւանդ այս վերջիններս այնքան դժբաղդ են : որքան որ Եւրոպա զանազան պարագաներէ ստիպեալ Պուլկարաց դատը պաշտպանել ջանաց, Յոյնք եւ Հայք ալ հաւասարապէս պէտք է որ Ռուսիոյ պաշտպանութիւնը վայելեն եւ պէտք է որ Ռուսիոյ բրած եւ ընելիք զոհողութեանց մեծութեանը արդիւնքն ալ ասոր համապատասխանէ :

Եթէ մէկ պատերազմ չը բաւէ այս արդար դատը վախճանելու, ուրիշ պատերազմներ ալ կրնան տրուիլ, ինչպէս բաւէ Պիւզօնաֆիլը. բայց մեզի անհաւանական երեւցածը այն է որ՝ Ռուսիա սուրը իր պատեանը չը պիտի դարձնէ, մինչեւ որ ամենուն շահուցը կատարեալ արդիւնք մը ձեռք չձգէ, եւ այս շահերը ոչ թէ միայն անձնական այլ եւ Եւրոպական է որ իր հաճութիւնն ալ տուաւ այս պատերազմին ձեռնարկութեանը համար :

ՏԷՅԼԻ ՆԻՈՒՍԻ ՅՆՈՐՔԸ

Տէյլի Նիուս կըսէ թէ՝ Անգլիոյ շահերը եթէ Սուէզի վտանգի ենթարկուած են ներկայ պատերազմովս, Անգլիա պէտք է որ զանոնք պաշտպանէ. բայց Անգլիա երբէք պարտական չէ տաճկական կառավարութիւնը պաշտպանելու, որ 20 տարիէ ի վեր բոլոր Եւրոպիոյ տաղտկութեանը պատճառ եղաւ. թէ եւ պատերազմի չարիքները աղետալի են, եւ պէտք է խնայել երկրին, սակայն վերջնական կերպով արեւելեան խնդրոյն որոշում մը տալը կարեւոր եւ անհրաժեշտ է :

Եւրոպա պէտք չէ որ Ռուսիոյ յաղթութենէն վերջը խորհի թէ ինչպէ՞ս պէտք է Օսմ. կայսրութիւնը ազատել. այլ հարկ է խորհիլ թէ ինչ կերպով իւր կործանմանը պատճառելիք չարեաց առջեւը պէտք է առնուլ : Այս կէտս պէտք է մեծ ուշադրութեան առնուլ, որպէս զի չըլլայ թէ վերջէն տէրութիւնք ստիպուի դաշնակցիլ Պուլկարիոյ կոտորածին հեղինակացը հետ. համարինք թէ Ռուսք Պօլիսը առնուն, Անգլիա պէտք է զայն պաշտպանէ ոչ թէ յանուն Տաճկաց այլ յանուն Եւրոպիոյ :

Նոյնպէս եթէ Անգլիոյ շահուցը նպաստաւոր դատուի, պէտք է որ Կրէտէն եւ Եգիպտոսն ալ գրաւուի եւ ոչ թէ յետոյ Տաճկաստանի վերադարձնելու պայմանաւ. զի այն ատեն Անգլիոյ պատիւը կաղարտի :

Թէ Բօթիի ամբոխուելուն եւ թէ Քալաֆաթի Օսմ. զօրաց մտնելուն լուրերն դեռ պաշտօնապէս չը հրատարակուեցաւ:

ՀԵՌԱԳՐԱՒՈՐՔ

Բէթրսպուրկ 25 ապրիլ

Զարին յայտարարութիւնը երեկ Քիշնէվի մէջ կարդացուեցաւ, եւ այսօր ալ եկեղեցեաց մէջ. Զարը վաղը Բէթրսպուրկ պիտի վերադառնայ :

Պուքրէշ 26 ապրիլ

Մինչեւ ցարդ հրացան մը չը պարպուեցաւ. Ռուսք բազմութեամբ Պօլկրատ կը մտնեն եւ անկէ Տօպրուճա կը յառաջեն :

Լոնտրա 26 ապրիլ

Բացակայ եղող սպայք հրաման ընդունեցան գնդերնուն հետ միանալու : Հացկերոյթի մը մէջ Սդաֆֆօրտ Նօրթքօթ յայտնեց թէ մեծ տրտմութեամբ ներկայ դիպուց վրայ կը խորհի, բայց ազգին օգնութեամբը իւր պարտքը կատարել պիտի ջանայ, ինչ բանի որ տէրութիւնը ձեռնարկէ : Անգլիական մամուլը խիստ զայրացած է Ռուսիոյ դէմ: Թայմզ կըսէ թէ Ռուսիա իրաւունք չունի յանուն Եւրոպիոյ խօսելու, Մօրնինկ Բօսթ կը հաստատէ թէ՝ Ռուսիոյ ընթացքը ուղղակի Անգլիոյ դէմ է :

Ա. Օ. Գ.

Տօքթօր Ա. Արապեան պատիւ ունի ծանուցանել ազգոյ հասարակութեան որ՝ կայսերական հիւանդանոցաց մէջ երկար ատեն զինուորական ծառայութեամբ անցնելէ վերջը՝ այս անգամ Պօլիս դարձած եւ իւր բնակութիւնը հաստատած է Իսկիւտար վանքին այգին Աճէմ Մինաս փողոց թիւ 1 տունը, ուր ամեն օր ժամ 5էն մինչեւ իրիկուն կրնան զինքն ուզողները գտնել ամեն տեսակ հիւանդութիւնք դարմանելու համար :

ԴՐԱՄԱԿԱՆ

ԱՊՐԻԼ 15 ՈՒՐԲԱԹ

Հինդնոց	113—00
Մէթալիք	114—00
Մէճիտիէ	105—00
Պղինձ	176—00
Անգղ. լիրա	110—00
Բօլ	89—20
20 Ֆրանգ	87—20
Քէրիմէ	51—00
Թղթադրամ	177—00

Լոնտրա 26 ապրիլ

Էսհամը ումումի 7-20

Բարիզ 26 ապրիլ

Էսհամը ումումի 7-85

Գօնսօլիտ

09-12	բացվէ.
09-18	բարձր
09-15	ցած
09-12	գոցվ.

ՏՕՔԹԷՕՐ ՃԷՄԱԼԵԱՆ

Մասնաւոր դարմանիչ դացիական ախտից, միզանցքափորփուքանաց և անդամ ծննդական գործարաններու վերաբերեալ հիւանդութեանց :

Տօքթէօր Ճէմալեան Լեհէնտին Բարիզի և Պէլճիքայի բժշկական վարժարաններուն մէջ թէ աշակերտութեանը միջոցին և թէ վկայեալ բժիշկ անուանելէն վերջը յատուկ աշխատութիւն տուած ըլլալով յիշեալ կարգի հիւանդութեանց, կը ծանուցանէ, որ ամէն երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ օրերը ժամը 6էն մինչև 11 Պախչէ գաբու Համիտիյէ Թիւրպէսին կարգը Ալեմտարեան վրէյն էֆէնտիին իշի դաբուլու դաղարանը թիւ 32. իրեն դիմող հիւանդները պիտի քննուին. նաև չաբաթուն միւս օրերն ալ ժամը 6էն մինչև 10 Բերա Քալլօնճի գուլլուգի կից Թարլապաշի ճամբուն 117 թիւ իւր բնակարանը :

Տ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ԳԾԱԳԻՐԸ

Պատիւ ունի ծանուցանել որ ճարտարապետական շինուածոց ամեն տեսակ գծագրութիւններ, արաբական և եւրոպական զարդանկարներու (օռնըման) վերաբերեալ գծագրութիւններ յօրինելու, նաև երկրաչափութեան վերաբերեալ որ և է աշխատութիւններ քննելու պատրաստ է : Նոյնպէս պատկերհանութեան մասին իւղանկարի և քարաչալէժ կենդանագիրներ և ֆոտօքրաֆիական (բէրոբէկլիւ) գծագրութիւններ գոհացուցիչ կը կատարէ :

Վերոգրեալ գծագրութեան ամէն ճիւղերուն համար թէ վարժարանաց մէջ և թէ ի մասնաւորի դասախօսելու պատրաստ է :

Զինքը տեսնել ուզողը բաց ի ուրբաթ և կիւրակէ օրերէ կէս օրէն ետքը կրնայ գտնել Նաֆիայի մէջ բէսամ օտասին, միւս ժամանակները Սամաթիա իւր բնակարանը :

ՏՕՔԹՕՐ ՄԱՐՔԵՐ

Վիէննա մէքթէպլէրինտէն'.

պէշ սէնէ մուգատտէմ [illegible] սըմըզ մէ պիր չօգ էյի օլան խաստախանէլէրտէ բուլունմուշ օլան տօքթօր Մարքէր՝ պու տէֆա Պէշիքթաշտա Բաշա մահալլէսինտէ Բում քիլիսէսի գարշըսընտա 4 նումէրօլու քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 3-5է գատար մատամա ֆագիր խաստալարա մէճճանէն պագաճագ տըր :

Տօքթօր միւմայիլէյհ հէր կիւն Գալաթատա Վօյվօտա սօգաղընտա Բօյնէր Էճզախանէսինտէ սաաթ 7-9ա գատար պուլունտուղու հէր նէվի խասթալըգլարա պագաճագ տըր :

Գուճաման մատտա պէրքէթլէրինա պագըլաճագ գէթեր օյունճան խանէսինտէ պուլունուր :

Միւմայիլէյհ տօքթօր, ճէրահի մէ էպէյէ մէ պաշ խաստալըգլարը, գանըն մէ գուլագ մէ գուլագ, այուգ, կէօզ մէ ... թալիպ ... էն ... պօղազ մէ ... գաման պէքլէմէյիպ ... էլի ... պիր ... թէտաւի ... պէտ ... նէ ... գան ... տիր ... խաստալար ... լըն ... ճէրէ ... ինէ ... գըր ... խաստա ... ֆաքիր ... պէտիլ ... քէնտի ... ճիլի ... իտէճէքտիր ... ժաման ... պիր ... հաքիմ ... ... լէր ...

Պէկա. 9

ԻԼԱՆ
ՄԻՀՐԱՆ ԱՐԻԿԵԱՆ

Եաղճը խանընտա խութ գաթտա 21 նումէրօլու օտատա հաֆթատա հէր կիւն էօյլէնտէն սօնրա թալիպ օլանլարա լիսան լէտաֆէթ պէյանը Թիւրքի խատթը մէ չակիրտանը հէր վէճհլէ խօշնուտ խալէճէգ տըր :

Ազգ. Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթօր Գաբրիէլ Էֆէնտի Նահապետեան, սոյնէնէ ամէն չորեքշաբթի օրերը ժամը 6էն 8 Սամաթիա Խիրախորը Թօգաթլեան Պ. Գաբրիէլի դեղարանը, և ուրբաթ օրերը ժամը 6էն 8 դարձեալ Սամաթիա Մ. Ճիվանաքեան դեղարանը, նաև Հիւանդանոց իրեն դիմող աղքատ հիւանդաց բաց առաջուի ըլլալու պատանայն ձրի կը ծանուցանէ ազգայ համարակութեան :

ԱԶԳ.
ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ
ԵՐԷՑԵԱՆ

Ցերեկեայ և գիշերօթիկ
Նէտիկ-փաշա Համամ փողոց
Թիւ 19

Այս հաստատութեան ձեռնարկելու խորհուրդը յղացած օրերնէս ի վեր զայն չարունակ բարեկարգ վիճակի մը ենթարկելու համար բաւական ծախուց պէտքը հետատնելով չուղեցինք առաջին անգամ արտաքին շպարումներով ու խեղ մը անհիմն «ուխտութեան» ներով յայտարարութիւններ ընել. որ դուցէ անբաւական գտնուելով չը յաջողինք ու հասարակութեան խափած ըլլանք : Աւելի լաւ համարեցինք տակաւ առ տակաւ յառաջ վարել նպատակնիս, ու վերջէն փայլիլ :

Գոհ եմք որ մեր սա փորձին մէջ խաբուած չը գտնուեցանք. զի այսօր հաստատութիւննիս իր եռամեայ շրջանին մէջ թէ՛ հեռաւոր և թէ՛ մօտակայ թաղերէ հոն յաճախող աշակերտութեան հետզհետէ աւելնալուն պարտաւորեցանք սա զի ամբ կից աւելի ընդարձակ և օդաւէտ տունը փոխադրել :

Այս մասին մեր չնորհակալութիւնք կը յայտնեմք պատուարժան ծնողաց, որոնք աւելի մեր գործին քան թէ մեր խօսքին համոզուած են և կը քաջալերեն զմեզ յարատեւ պահելու սոյն նախկական յարկը յօգուտ Հայ մանկտույն :

Վարժարանիս մէջ կաւանդուին հետեւեալ ուսմունք և լեզուագիտութիւնք :

Հայ. Գաղղ. Անգ. և Տաճ. լեզուք . մաթեմաթիքա բոլոր ճիւղերն, Աշխարհ. երեք մասերուն համար առանձիններու վերայ գծագրութեամբ վարժելով. Ազգ. Պատ. Քրիստոնէական ուսումն՝ ըստ դաւանութեան Հայ. Լուսաւորչական Ս. Եկեղեցւոյ, Եւրոպական նօթա, գծագ. գեղագ. դաշնակ, աղջկանց համար ասեղնագործ, ամեն տեսակ մաքնայով կար, ձեւելու և ծաղիկ շինելու արհեստք :

Հակառակ այսչափ ուսմանց և լեզուագիտութեանց, վճարմունք գոհացուցիչ են ամէն աստիճանի ծնողաց :

Փոքրիկ մանկանց համար, ամսաթոշակ մէկ քանինոց թղթադրամ :

Ուսումնարան մանուկներու համար երկու քանինոց թղթադրամ :

Դաշնակի համար երկու քըսանոց թղթադրամ :

Գիշերօթիկներու համար երկու հարիւր յիսուն ղշ. ընթացիկ դրամ :

Պարտք կը համարիմք եւս ծանուցանել թէ մեծարգոյ ծընողք և ուսանողք կրնան զմեզ ամեն օր կէս օրէն վերջը նոյն յարկը գտնել և ընդարձակ տեղեկութիւն առնուլ :

Հիմնադիր-Տեսուչ
Թ. Փափազեան

1877 Ապրիլ 6
Երէցեան վարժարան

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Աշխատասիրեաց
Գ. Ս. ԽԱՊԱԵԱՆ
[illegible]

Նորատիպ տպարանէն ի լոյս ընծայուած 245 երեսէ բաղկացեալ անդրակ մէ, կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով աժան գնով :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԷՏԼԵԱՆ
ՄԱՐԻՕՆ ՏԸԼՕՐՄԻ
ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ
կամ
ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ
ՆՕԺԷՆ ՏԸ ՄԻՐԳՈՒՐ

Սոյն հրահանգիչ վէպին Հայերէն թարգմանութեան Բ. հատորը Պօլիս հասած ըլլալով կը գտնուի Ս. Գ. և Եաղմաճեան գրատունը Եէնի-Ճամի Զինճիրլիլէր ճամպէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով. գին 2 ֆր:

Ամբողջ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ :

Գ. ՏԸ ԳԱՄՕՐ

Հեղինակ Օգթավ Ֆեօյէ
Թարգմանիչ Գ. Չելինկիրեան

Սոյն ընտիր վէպին երկրորդ՝ այն է վերջին հատորը Պօլիս հասած ըլլալով, կը ծախուի Ս. Գ. և Եաղմաճեան գրատունը Եէնի-ճամի Զինճիրլիլէր ճամպէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով :

Գին 1 ֆրանք 50 սանդիմ.

ԱՍԸԼ
ԳԱԶԱՄԻԱ
ՍԱՆԻ
1877
ՍԷՆԷՅԻ ԻՍԱՎԻՅԷՅԷ ՄԱԽՍՈՒՍ
ՕԼԱՆ ԻՍԹԻԽՐԱՃԱԹ
(ԻԼԱՎԷ)
ՌՈՒՅԳՈՒՅԱ ԿԷՕՐԻՒՆԷՆ ԲՈՒԽԱԼԱՐԸՆ
ՄԱՆԱԼԱՐԸ

Իքինճի տէֆա թապ օլունուպ հէր Էրմէնի քիթապճը տիւքեանլարընտա սաթըլմագտա տըր

Ֆի, 100 փարա

ԽՄԲԱԳԻՐ
ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
Եուսուֆեան խան վերի յարկ
Թիւ 7